Digitally signed by GASPARYAN LUSINE 7809730103
Date: 2022.09.20 11:12:49 AMST

**Թեմատիկ պլանավորում**
**Գրականություն 9-րդ դասարան**
**Տարեկան 102 ժամ**
**Շաբաթական ժամ**
**Դասագրքի հեղինակ՝ Դ. Գասպարյան, տարեթիվ 2018թ.**

| | | |
|---|---|---|
| **Նպատակ** | | . Ունենա գրականագիտական տարրական գիտելիքներ (գրական ժանրեր, պատկերավորման միջոցներ),<br>. գրավոր շարադրել սեփական մտքերը, զգացումները, կարծիքը, գրագետ խոսքը դարձնել ինքնարտահայտման և ինքնադրսևորման միջոց,<br>. հասնել նրան, որ կարդա գեղարվեստական ոչ բարդ տեքստեր և բանավոր ու գրավոր վերարտարի դրանց բովանդակությունը,<br>. ձևավորել արժեքային համակարգ: |
| **Վերջնարդյունքներ** | | **Կարողանա՝**<br>. տարբերակել արձակ և չափածո ստեղծագործությունները<br>. գտնել կարդացած տեքստերում հանդիպած բառերի իմաստն ու նշանակությունը,<br>. կարողանա սահուն և գրագետ կարդալ՝ հասկանալով կարդացածի իմաստը և պահպանելով հայերեն խոսքի ճիշտ արտասանությունը,<br>. գրագետ հայերենով բանավոր և գրավոր արտահայտել իր կարծիքը՝ կարդացածի, լսածի, տեսածի վերաբերյալ: |
| **Ներածություն** | | **Նպատակ՝**<br>. համառոտ ծանոթանել հայ ժողովրդի ծագումնաբանության,<br>. գիտակցել գրականության դերը հասարակական կյանքում, ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը,<br>. ծանոթանել հայ գրականության բաժանման շրջաններին,<br>. իմանալ հայ գրականության տարբեր ենթաշրջաններում ինչ հայտնի գրողներ են ստեղծագործել:<br>**Վերջնարդյունք՝**<br>. համառոտ ներկայացնել հայ ժողովրդի ծագումնաբանությունը,<br>. ընկալել գրականության դերը հասարակական կյանքում, նրա ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը,<br>. ներկայացնել հայ գրականության բաժանման շրջանները,<br>. թվարկել հայ գրականության տարբեր ենթաշրջաններում հայտնի գրողների անուններ: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | 3-5 | Ներածություն |
| **Մեսրոպ Մաշտոց Թեմատիկ պլանավորում** | | **Նպատակ՝**<br>. իմանալ հայ ժողովրդի կյանքում գիր ունենալու անհրաժեշտությունը,<br>. արժևորել Մեսրոպ Մաշտոցի դերը հայ գրերի ստեղծման գործում,<br>. անդրադառնալ նախամաշտոցյան գրերի մասին տեղեկություններին,<br>. ծանոթանալ Մեսրոպ Մաշտոցի կյանքին և գործունեությանը՝ ըստ Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատության:<br><br>**Վերջնարդյունք՝** |

| | | |
|---|---|---|
| | | . բացատրել գրերի ստեղծման անհրաժեշտության նախապատմությունը,<br>. ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի դերը հայ գրերի ստեղծման գործում,<br>. պատմել նախամաշտոցյան գրերի մասին,<br>. ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի կյանքն և գործունեությունը՝ ըստ Կորյունի: |
| 2 | 6-15 | Մեսրոպ Մաշտոցի կյանքը և գործունեությունը: |
| 2 | 16 -20 | Կորյուն: «Վարք Մաշտոցի» |
| 2 | 21-28 | Հայոց գրերի պատմական նշանակությունը: |
| 1 | | Գրերի գյուտին հաջորդող գրական-մշակութային շարժումը: |
| **Փավստոս Բուզանդ** | | **Նպատակը՝**<br>. ծանոթանալ Փավստոս Բուզանդին և նրա աշխատությանը,<br>. ընդհանուր գծերով պատկերացնել 4-րդ դարի կարևոր իրադարձություն- ները,<br>. ձևավորել հայրենասիրական զգացումներ,<br>. ուսումնասիրել «Արշակ և Շապուհ» հատվածը:<br>**Վերջնարդյունք՝**<br>. ներկայացնել Փավստոս Բուզանդին և նր աշխատությունը,<br>. պատմել 4-րդ դարի պատմության կարևոր իրադարձությունների մասին,<br>. վերարտադրել Արշակ Երկրորդ թագավորի և Շապուհ արքայի մասին պահպանված զրույցը,<br>. արժևորել հայրենի հողի ուժը: |
| 2 | 29-32 | Փավստոս Բուզանդ. կյանքը և գործունեությունը: |
| 4 | 33-40 | Արշակ և Շապուհ |
| 1 | | Արշակ և Շապուհ |
| 1 | | **Թեմատիկ գրավոր աշխատանք 1** |
| **Մովսես Խորենացի** | | **Նպատակը՝**<br>. ծանոթանալ Մովսես Խորենացու կյանքին և գործունեությանը,<br>. գիտակցել Խորենացու՝ իբրև ստուգապատում պատմիչի դերը,<br>. անդրադառնալ Խորենացու «Հայոց պատմություն» գրքին՝ որպես հայ ժողովրդի ծննդաբանության հիմնական աղբյուրի,<br>. ծանոթանալ Մ. Խորենացու «Հայոց պատմության» գրքի բովանդա- կությանը,<br>. ծանոթանալ մեր բանահյուսության գանձերին,<br>. առասպելների միջոցով ծանոթանալ մեր պատմության հերոսական էջերին:<br>**Վերջնարդյունք՝**<br>. ներկայացնել Մ. Խորենացու կյանքն ու գործունեությունը,<br>. բացատրել Մ. Խորենացու՝ որպես վավերական պատմիչի գրքի կարևորությունը,<br>. արժևորել Խորենացու «Հայոց պատմություն» գիրքը՝ որպես հայ ժողովրդի ծննդաբանության հիմնական աղբյուրի,<br>. պատմել Մ. Խորենացու գրքի հակիրճ բովանդակությունը՝ ըստ |

| | | |
|---|---|---|
| | | դասագրքի,<br>. ներկայացնել մեր բանահյուսական գանձերը,<br>. թվարկել առասպելները,<br>. արժևորել մեր ժողովրդի բարոյական չափանիշները: |
| 1 | 41-43 | Մովսես Խորենացի, կյանքը, նրա «Հայոց պատմությունը» |
| 1 | 43-46 | «Հայոց պատմության» կառուցվածքը և բովանդակությունը: |
| 2 | 47-52 | Հայկ և Բել |
| 2 | 53 - 56 | Արա Գեղեցիկ և Շամիրամ |
| 2 | 56-62 | Տիգրան և Աժդահակ |
| 2 | 66-69 | Արտաշես և Արտավազդ |
| 1 | 71-74 | «Ողբ» հատվածը |
| 1 | | Թեմայի ամփոփում |
| 1 | | **Թեմատիկ գրավոր աշխատանք 2** |
| **«Սասնա ծռեր» դյուցազներգությունը** | | **Նպատակ՝**<br>. ծանոթանալ դյուցազներգությանը,<br>. ծանոթանալ հայ ժողովրդական դյուցազներգությանը,<br>. իմանալ դյուցազներգության ստեղծման պատճառները:<br><br>**Վերջնարդյունք՝**<br>. ներկայացնել դյուցազներգությունը որպես բանահյուսական դրսևորում,<br>. ընկալել հայ ժողովրդական դյուցազներգության հիմնական գաղափարը,<br>. արժևորել դյուցազներգության ստեղծման պատճառները: |
| 1 | 75-79 | Ընդհանուր ակնարկ դյուցազներգության մասին |
| 2 | 79-91 | Առաջին ճյուղ, «Սանասար և Բաղդասար» |
| 2 | 91-101 | Երրորդ ճյուղ, «Սասունցի Դավիթ». Դավիթի և Մելիքի մենամարտը |
| 2 | 102-109 | Դավիթի մահը |
| 2 | 110-113 | Չորրորդ ճյուղ, Մհերի ամուսնությունը և վերջը |
| 2 | 114-121 | Հովհաննես Թումանյան «Սասունցի Դավիթ» պոեմից հատված |
| 1 | | Թեմայի ամփոփում |
| 1 | | **Գործնական աշխատանք** |
| **Հայ միջնադարյան քնարերգություն** | | **Նպատակ՝**<br>. ծանոթանալ հայ միջնադարյան քնարերգության սեռերին ու տեսակներին,<br>. անդրադառնալ հայ միջնադարյան քնարերգությանը,<br>ծանոթացնել հայ միջնադարյան քնարերգուներին,<br>. իմանալ Գրիգոր Նարեկացու կյանքի հիմնական դրվագները,<br>. տեղեկացված լինել Նարեկացու ստեղծագործության ընդհանուր նկարագրին,<br>. իմանալ «Մեղեդի ծննդյան» տաղի բովանդակությունը: |

| | | |
|---|---|---|
| | | **Վերջնարդյունք՝**<br><br>. ներկայացնել հայ միջնադարյան քնարերգության սեռերն ու տեսակները,<br>. հակիրճ պատմել հայ միջնադարյան քնարերգության մասին,<br>. ներկայացնել հայ միջնադարյան քնարերգուներին,<br>• ճանաչել միջնադարյան հայ գրականության նշանավոր ներկայացուցչին՝ Նարեկացուն, նրա կյանքի հետաքրքիր դրվագները,<br>• խոսել Նարեկացու ստեղծագործությունների մասին, (նրա՝ հայ բանաստեղծական արվեստի մեջ նոր շրջափուլ սկզբնավորելու մասին)<br>. սովորել լավագույն գործերից մեկը՝ «Մեղեդի ծննդյան»: |
| 1 | 129-133 | Հայ միջնադարյան գրականության սեռերն ու տեսակները |
| 1 | 134-141 | Հայ միջնադարյան քնարերգություն |
| 1 | 142-147 | Գրիգոր Նարեկացու կյանքը և ստեղծագործությունը |
| 2 | 148-152 | «Մեղեդի ծննդյան» տաղը |
| 1 | | Թեմայի ամփոփում |
| 1 | | **Թեմատիկ գրավոր աշխատանք 3** |
| 2 | | **Ամփոփում** |
| 1 | | |
| **Ներսես Շնորհալի** | | **Նպատակ՝**<br>. ծանոթանալ Ներսես Շնորհալու կյանքին,<br>. ծանոթանալ Ներսես Շնորհալու ստեղծագործություններից մի քանիսին,<br>. իմանալ «Առավոտ լուսո» շարականի հիմնական գաղափարը:<br><br>**Վերջնարդյունք՝**<br>. ներկայացնել Ներսես Շնորհալու կյանքի որոշ տվյալներ,<br>. ներկայացնել Ներսես Շնորհալու ստեղծագործություններից մի քանիսը,<br>. ընկալել «Առավոտ լուսո» շարականի հիմնական գաղափարը: |
| 2 | 153-155 | Ներսես Շնորհալու կյանքը և ստեղծագործությունը |
| 2 | 155-163 | «Առավոտ լուսո» շարականը |
| 1 | | Թեմայի ամփոփում |
| 1 | | **Թեմատիկ գրավոր աշխատանք 4** |
| **Նահապետ Քուչակ** | | **Նպատակ՝**<br>. իմանալ Նահապետ Քուչակի մասին,<br>. ծանոթանալ Քուչակի ստեղծագործություններին,<br>. իմանալ մի քանի հայրենի բովանդակություն,<br>. անգիր սովորել հայրեններից մի քանիսը:<br><br>**Վերջնարդյունք՝**<br>. ներկայացնել միջնադարյան հայ գրականության նշանավոր |

| | | |
|---|---|---|
| | | դեմքերից մեկին՝ Նահապետ Քուչակին,<br>. սահմանել՝ ինչպիսի ստեղծագործություններ են հայրենները,<br>. սահուն և գրագետ կարդալ հայրենները,<br>. հայրեններից մի քանիսը սովորել անգիր: |
| 1 | 167-170 | Նահապետ Քուչակի կյանքը և ստեղծագործությունը |
| 1 | 167-168 | Հայրենը որպես գրական տեսակ |
| 5 | 171-178 | Հայրեններ |
| 1 | | Թեմայի ամփոփում |
| 1 | | **Թամատիկ գրավոր աշխատանք 5** |
| Սայաթ-Նովա | | **Նպատակ՝**<br>. ծանոթանալ Սայաթ-Նովայի կենսագրության հիմնական դրվագներին,<br>. իմանալ ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը,<br>. իմանալ «Աշխարումըս ախ չիմ քաշի» խաղը:<br><br>**Վերջնարդյունք՝**<br>. ներկայացնել Սայաթ-Նովայի կենսագրության հիմնական դրվագները,<br>. ներկայացնել Սայաթ-Նովայի ստեղծագործությունները՝ նշելով՝ ինչ լեզուներով է ստեղծագործել,<br>. արտահայտիչ կարդալ «Աշխարումըս ախ չիմ քաշի» խաղը,<br>. դատողություններ անել խաղի հիմնական գաղափարի շուրջ,<br>. բնութագրել խաղի քնարական հերոսուհուն: |
| 1 | 179 - 183 | Սայաթ-Նովայի կյանքը և ստեղծագործությունը: |
| 2 | 185-188 | «Աշխարումըս ախ չիմ քաշի» խաղը: Գոզալի կերպարը սիրերգում: |
| 1 | 189-193 | Սայաթ-Նովայի բանաստեղծական արվեստը: |
| 1 | | Թեմայի ամփոփում: |
| 1 | | **Գործնական աշխատանք** |
| **Խաչատուր Աբովյան** | | **Նպատակ՝**<br>. ծանոթանալ Խաչատուր Աբովյանի կենսագրության հիմնական դրվագներին,<br>. իմանալ ստեղծագործության ընդհանուր բնութագիրը,<br>. իմանալ «Վերք Հայաստանի» վեպի «Յառաջաբան»-ից բերված հատվածի բովանդակությունը,<br>. իմանալ վեպի մի քանի տարատեսակների մասին:<br><br>**Վերջնարդյունք՝**<br>. ներկայացնել Խաչատուր Աբովյանի կենսագրության հիմնական դրվագները,<br>. ընկալել «Յառաջաբան»-ից բերված հատվածի բովանդակությունը,<br>. ընկալել լեզվի դերը և նշանակությունը,<br>. թվարկել վեպի մի քանի տարատեսակ: |
| 1 | 194-196 | Խաչատուր Աբովյան կյանքը: |
| 1 | 196 -200 | Խաչատուր Աբովյան ստեղծագործությունը: |

| | | |
|---|---|---|
| 1 | 201- 203 | Վեպ. վեպի տարատեսակները: |
| 1 | 203-204 | Դիպաշար. դիպաշարի բաղկացուցիչ մասերը: |
| 2 | 205-215 | «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբան» - ը: |
| 1 | 205-215 | **«Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբան»-ը** |
| **Միքայել Նալբանդյան** | | **Նպատակ՝**<br>. ծանոթանալ Միքայել Նալբանդյանի կենսագրության հիմնական դրվագներին,<br>. իմանալ ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>. իմանալ «Ազատություն», «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունների բովանդակությունը:<br><br>**Վերջնարդյունք՝**<br>. ներկայացնել Միքայել Նալբանդյանի կենսագրության հիմնական դրվագները,<br>. արտահայտիչ կարդալ «Ազատություն», «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունները,<br>. վերարտադրել բանաստեղծությունների հիմնական բովանդակությունը: |
| 1 | 216-219 | Միքայել Նալբանդյանի կյանքը և ստեղծագործական ուղին: |
| 1 | 220-224 | Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը: |
| 1 | 224-226 | Միքայել Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը: |
| | 224-226 | Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը |
| 1 | 227-231 | Միքայել Նալբանդյանի «Ապոլոնին» և «Մանկության օրեր» բանաստեղծությունները: |
| 1 | | **Թեմատիկ գրավոր աշխատանք 6** |
| **Ռափայել Պատկանյան** | | **Նպատակ՝**<br>. ծանոթանալ Ռափայել Պատկանյանի կենսագրության հիմնական դրվագներին,<br>. իմանալ ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>. իմանալ «Արաքսի արտասուքը», «Օրորոցի երգը» բանաստեղծությունների բովանդակությունը:<br><br>**Վերջնարդյունք՝**<br>. ներկայացնել Ռափայել Պատկանյանի կենսագրության հիմնական դրվագները,<br>. արտահայտիչ կարդալ «Արաքսի արտասուքը», «Օրորոցի երգը» բանաստեղծությունները,<br>. ներկայացնել բանաստեղծությունների հիմնական գաղափարը,<br>. մտաբերել հայ ժողովրդի պատմական անցյալը: |
| 1 | 232 - 233 | Ռափայել Պատկանյանի կյանքը և ստեղծագործական ուղին: |
| 2 | 234-239 | Ռափայել Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը: |
| 1 | 240-246 | Ռափայել Պատկանյանի «Օրորոցի երգը» բանաստեղծությունը: |
| 1 | | Թեմայի ամփոփում |

| | | |
|---|---|---|
| Վիլյամ Շեքսպիր | | **Նպատակ՝**<br>. ծանոթանալ Վիլյամ Շեքսպիրի կենսագրության հիմնական դրվագներին,<br>. իմանալ ստեղծագործության ընդհանուր բնութագիրը,<br>. իմանալ «Համլետ»-ից բերված հատվածի բովանդակությունը:<br><br>**Վերջնարդյունք՝**<br>. ներկայացնել Վիլյամ Շեքսպիրի կենսագրության հիմնական դրվագները,<br>. ընկալել և վերարտադրել հատվածի բովանդակությունը,<br>. ներկայացնել հերոսներին, վերլուծել գլխավոր հերոսի կերպարը: |
| 1 | 247 -254 | Վիլյամ Շեքսպիր կյանքը և ստեղծագործական ուղին: |
| 1 | 254 -259 | Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը: |
| 1 | 254-259 | «Համլետ» ողբերգության կառուցվածքն ու բովանդակությունը: |
| 2 | 260-290 | «Համլետ» ողբերգության երրորդ արարվածի բովանդակությունը: |
| 1 | | <<Համլետ>> |
| 3 | | Թեմայի կրկ |
| 1 | | **Ամփոփում** |

**Դաս 1. Ներածություն** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ի՞նչ շրջանների է բաժանվում հայ գրականությունը:
2. Ե՞րբ է ձևավորվել հայերեն գրավոր շրջանը:
3. Ովքե՞ր են ստեղծագործել 5-րդ դարում:
4. Ինչպե՞ս է կոչվում 5-րդ դարը:
5. Ո՞ւմ անվան հետ է կապվում գրային շրջանի հայ գրականության բուռն զարգացումը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Հայ հին և միջնադարյան գրականության պատմական զարգացման փուլերը:
2. Հայ գրականության գրային շրջանը ձևավորվել է 5-րդ դարում:
3. 5-րդ դարի ստեղծագործողներից մի քանիսին:
4. 5-րդ դարը կոչվում է Ոսկեդար:
5. Հայ գրականության գրային շրջանը կապվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Թվարկել հայ գրականության պատմական զարգացման փուլերը:
2. Ներկայացնել ` հայ գրականության գրային շրջանը ձևավորվել է 5-րդ դարում:
3. Թվարկել 5-րդ դարի ստեղծագործողներից մի քանիսին:
4. Սահմանել՝ 5-րդ դարը կոչվում է Ոսկեդար:
5. Նշել՝ հայ գրականության գրային շրջանը կապվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ:

**Դաս 2. Մեսրոպ Մաշտոցի կյանքը և գործունեությունը:** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ի՞նչ դեր ունի գիրը ժողովուրդների կյանքում:
2. Ի՞նչ գիտեք նախամաշտոցյան գրերի մասին:
3. Ի՞նչ գիտեք Մաշտոցի մասին:
4. Ե՞րբ և որտե՞ղ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը:
5. Ե՞րբ է վախճանվել և որտե՞ղ է ամփոփվել Մաշտոցը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Հայ գիրն ունեցավ ազգապահպան նշանակություն:
2. Գրերի գյուտից առաջ եղել են Դանիելյան նշանագրեր:
3. Մաշտոցի կենսագրության և գործունեության որոշ դրվագներ:
4. Մաշտոցը գրերը ստեղծել է Եդեսիայում 405 թվականին:
5. Մաշտոցը վախճանվել է 440 թվականին և ամփոփվել Օշականում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Բացատրել հայ գրերի ազգապահպան նշանակությունը:
2. Նշել՝ գրերի գյուտից առաջ եղել են Դանիելյան նշանագրեր:
3. Պատմել Մաշտոցի կենսագրության և գործունեության որոշ դրվագներ:
4. Մտաբերել՝ Մաշտոցը գրերը ստեղծել է Եդեսիայում 405 թվականին:
5. Ներկայացնել՝ Մաշտոցը վախճանվել է 440 թվականին և ամփոփվել Օշականում:

**Դաս 3. Կորյուն: «Վարք Մաշտոցի»** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ի՞նչ գիտեք Կորյունի մասին:
2. Ու՞մ մասին է Կորյունի գիրքը:
3. Ինչպե՞ս է վերնագրված Կորյունի գիրքը:
4. Ու՞մ է դիմում Մաշտոցը գրերի ստեղծման հարցով:
5. Ինչպե՞ս է Կորյունը նկարագրում հայոց այբուբենի ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի կողմից:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Կենսագրական տեղեկությունների Կորյունի մասին:
2. Կորյունի գիրքը Մաշտոցի մասին է:
3. Կորյունի գիրքը վերնագրված է «Վարք Մաշտոցի»:
4. Գրերի ստեղծման հարցով Մաշտոցը դիմել է Սահակ Պարթևին և Վռամշապուհ արքային:
5. Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց այբուբենի ստեղծման պատմությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ներկայացնել կենսագրական տեղեկություններ Կորյունի մասին:
2. Մտաբերել՝ Կորյունի գիրքը Մաշտոցի մասին է:
3. Նշել՝ Կորյունի գիրքը վերնագրված է «Վարք Մաշտոցի»:
4. Պատմել՝ գրերի ստեղծման հարցով Մաշտոցը դիմել է Սահակ Պարթևին և Վռամշապուհ արքային:
5. Ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց այբուբենի ստեղծման պատմությունը:

**Դաս 4. Հայոց գրերի պատմական նշանակությունը: Գրերի գյուտին հաջորդող գրական-մշակու- թային շարժումը:**

Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ի՞նչը ծայր առավ գրերի գյուտից անմիջապես հետո:
2. Ո՞ր մատյան թարգմանվեց գրերի գյուտից անմիջապես հետո և որ՞ն էր հայատառ առաջին նախադասությունը:
3. Ովքե՞ր են Ոսկեդարի հայ պատմիչները:
4. Ո՞ վ է Ագաթանգեղոսը և ի՞նչ է գրել:
5. Ինչի՞ մասին է Ագաթանգեղոսի «Պատմություն» գիրքը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Գրերի գյուտից անմիջապես հետո ծայր առավ թարգմանական գործը:
2. Գրերի գյուտից հետո թարգմանվեց «Աստվածաշունչը» և հայատառ առաջին նախադասությունը:
3. Ոսկեդարի պատմիչներին՝ Ագաթանգեղոս, Եղիշե, Փավստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի:
4. Ագաթանգեղոսը 5-րդ դարի պատմիչ է և գրել է «Պատմություն» գիրքը:
5. Ագաթանգեղոսի «Պատմություն» գրքի կառուցվածքը և ինչի մասին է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ներկայացնել՝ գրերի գյուտից անմիջապես հետո ծայր առավ թարգմանական գործը:
2. Նշել՝ գրերի գյուտից հետո թարգմանվեց «Աստվածաշունչը» և արտաբերել հայատառ առաջին նախադասությունը:
3. Թվարկել Ոսկեդարի պատմիչներին՝ Ագաթանգեղոս, Եղիշե, Փավստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի:
4. Պատմել Ագաթանգեղոսի մասին և նշել նրա գրքի անունը:
5. Ներկայացնել Ագաթանգեղոսի պատմության կառուցվածքը և ինչի մասին է շարադրված:

**Դաս 5. Հայոց գրերի պատմական նշանակությունը: Գրերի գյուտին հաջորդող գրական-մշակու- թային շարժումը:**

[Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞ վ է Եղիշեն և ի՞նչ է գրել:
2. Ինչի՞ մասին է Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» աշխատությունը:
3. Ո՞ վ է Ղազար Փարպեցին և ի՞նչ է գրել:
4. Ինչի՞ մասին է Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն» աշխատությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Եղիշեն 5-րդ դարի պատմիչ է և գրել է «Վարդանի և հայոց պատերազմի մասին» աշխատությունը:
2. Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» աշխատության բովանդակությունը:
3. Ղազար Փարպեցին 5-րդ դարի պատմիչ է և գրել է «Հայոց պատմություն» աշխատությունը:
**4.** Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն» աշխատության բովանդակությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1 Պատմել Եղիշեի մասին և նշել նրա գրքի անունը:
5. Ներկայացնել Եղիշեի պատմության կառուցվածքը և ինչի մասին է շարադրված:
3. Պատմել Ղազար Փարպեցու մասին և նշել նրա գրքի անունը:
4. Ներկայացնել Ղազար Փարպեցու պատմության կառուցվածքը և ինչի մասին է շարադրված:

**Դաս 6. Փավստոս Բուզանդի կյանքը և գործունեությունը:** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

**1.** Ո՞ վ է Փավստոս Բուզանդը և ի՞նչ է գրել:
2. Ինչի՞ մասին է Փ. Բուզանդի «Հայոց պատմություն» գիրքը:
3. Ո՞ր ոճով է գրված Փ. Բուզանդի գիրքը:
4. Հայոց ո՞ր արքաների գործունեության շրջանն է պատկերված Փ. Բուզանդի գրքում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Փավստոս Բուզանդի մասին:
2. Նրա գիրքն ընդգրկում է Խոսրով Կոտակից մինչը Հայաստանի առաջին բաժանումը:
3. Փ. Բուզանդի գիրքը գրված է զրույցի տեսքով:
4. Գրքում ներկայացվում է Խոսրով Կոտակից մինչև Խոսրով Չորրորդի գործունեության շրջանը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ներկայացնել Փավստոս Բուզանդին:
2. Պատմել՝ նրա գիրքն ընդգրկում է Խոսրով Կոտակից մինչը Հայաստանի առաջին բաժանումը:
3. Մեկնաբանել՝ Փ. Բուզանդի գիրքը գրված է զրույցի տեսքով:
4. Նշել՝ գրքում ներկայացվում է Խոսրով Կոտակից մինչև Խոսրով Չորրորդի գործունեության շրջանը:

**Դաս 7. Արշակ և Շապուհ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ինչու՞ է Արշակ Երկրորդը գնում Շապուհ արքայի մոտ:
2. Ինչպե՞ս է Շապուհը ընդունում Արշակ թագավորին:
3. Ի՞նչ է պահանջում Շապուհը Արշակ արքայից:
4. Ինչպե՞ ս է Շապուհը փորձում Արշակ թագավորին:
5. Ինչպե՞ս վարվեց Շապուհը Արշակ թագավորի հետ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Արշակ Երկրորդը Շապուհի հրավերով է գնում Պարսկաստան:
2. Շապուհը Արշակին նախ ընդունում է բարեկամաբար:
3. Շապուհը պահանջում է Արշակից հնազանդության երդում:
4. Շապուհը Արշակ թագավորին փորձում է հայկական և պարսկական հող ու ջրով:
5. Շապուհը բանտարկում է Արշակին Անհուշ բերդում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ներկայացնել՝ Արշակ Երկրորդը Շապուհի հրավերով է գնում Պարսկաստան:
2. Պատմել՝ Շապուհը Արշակին նախ ընդունում է բարեկամաբար:
3. Նշել՝ Շապուհը և Արշակը, իբրև հայր ու որդի, ավատարմության երդում են տալիս:
4. Ներկայացնել՝ Շապուհը ինչպես է փորձում Արշակին:
5. Պատմել ՝ որտեղ է Շապուհը բանտարկում Արշակ թագավորին:

**Դաս 8. Արշակ և Շապուհ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Արշակին բանտարկելուց հետո ու՞մ է իր մոտ կանչում Շապուհը:
2. Ինչպես է Շապուհը դիմում Վասակ սպարապետին:
3. Ի՞նչ պատասխան տվեց Վասակը Շապուհին:
4. Ինչպե՞ս վարվեց Շապուհը Վասակի հետ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Արշակին բանտարկելուց հետո Շապուհը հրամայում է իր մոտ բերել Վասակ սպարապետին:
2. Շապուհը անարգում է Վասակ սպարապետին՝ անվանելով աղվես:
3. Վասակը հանդուգն պատասխան է տալիս Շապուհին:
4. Շապուհը մորթազերծ անել է տալիս Վասակին և մորթը խոտով լցնելով՝ կախել է տալիս Արշակի աչքի առաջ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ներկայացնել՝ Արշակին բանտարկելուց հետո Շապուհը հրամայում է իր մոտ բերել Վասակ սպարապետին:
2. Նշել՝ Շապուհը անարգում է Վասակ սպարապետին՝ անվանելով աղվես:
3. Ներկայացնել՝ Վասակը հանդուգն պատասխան է տալիս Շապուհին:
4. Պատմել՝ Շապուհը մորթազերծ անել է տալիս Վասակին և մորթը խոտով լցնելով՝ կախել է տալիս Արշակի աչքի առաջ:

**Դաս 9. Մովսես Խորենացի, կյանքը, նրա «Հայոց պատմությունը»** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞վ է Մովսես Խորենացին:
2. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Խորենացին:
3. Ո՞վ է եղել Մովսես Խորենացու ուսուցիչը:
4. Ո՞վ է Խորենացուն պատվիրում գրել «Հայոց պատմություն» գիրքը:
5. Ի՞նչ պահանջներ է առաջադրում Սահակ Բագրատունին «Հայոց պատմությունը» գրելու համար:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Մովսես Խորենացին պատմիչ է, երանելի փիլիսոփա, լուսավորիչ:
2. Խորենացին ծնվել է Տարոն գավառի Խորեն գյուղում 410-415 թվականների միջակայքում:
3. Խորենացին աշակերտել է Մեսրոպ Մաշտոցին:
4. Հայաստանի մարզպան Սահակ Բագրատունին է պատվիրել գրել «Հայոց պատմությունը»:
5. Սահակ Բագրատունին երեք հիմնական պահանջներ է դրել՝ համառոտագրություն, ճշգրտություն, արագություն:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ներկայացնել Խորենացու գրական դիմանկարը:
2. Պատմել Խորենացու ծննդավայրի և տարեթվի մասին:
3. Նշել, որ Խորենացին Մեսրոպ Մաշտոցի աշակերտն է:
4. Նշել, որ Սահակ Բագրատունին է պատվիրել գրել «Հայոց պատմությունը»:
5. Թվարկել Սահակ Բագրատունու երեք հիմնական պահանջները:

**Դաս 10. Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքի կառուցվածքը և բովանդակությունը**

[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Քանի՞ գրքից է բաղկացած Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:
2. Ի՞նչ բովանդակություն ունի Խորենացու «Հայոց պատմությունը»:
3. Ովքե՞ր են Խորենացու համար ըստ քաջության առանձնացված երեք արքաները:
4. Ինչո՞վ է եզրափակվում «Հայոց պատմությունը»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» կազմված է երեք գրքից:
2. Խորենացու Հայոց պատմությունը սկսվում է մեր ժողովրդի ծննդաբանությունից և հասնում մինչև իր ապրած ժամանակները:
3. Խորենացին ըստ քաջության սիրում էր թվել՝ Հայկ, Արամ, Տիգրան:
4. Խորենացու «Հայոց պատմությունը» եզրափակվում է «Ողբ»-ով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» կազմված է երեք գրքից:
2. Պատմել՝ Խորենացու «Հայոց պատմության» հակիրճ բովանդակությունը՝ ըստ դասագրքի:
3. Թվել Խորենացուն սիրելի քաջ երեք արքաների անունները:
4. Ներկայացնել՝ Խորենացու Հայոց պատմությունը եզրափակվում է «Ողբ»-ով:

**Դաս 11. Հայկ և Բել** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Որո՞նք են հայ հին վիպերգերը:
2. Ո՞վ է մեր երկրի ու ժողովրդի անվանադիր նախնին:
3. Ինչպիսի՞ն էր Հայկը:
4. Ո՞վ էր Բելը և ի՞նչ էր պահանջում Հայկից:
5. Ե՞րբ է ձևավորվել «Հայկ և Բել» առասպելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Խորենացու «Հայոց պատմության» միջոցով մեզ են հասել մի քանի վիպերգեր /առասպելներ/՝ «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տիգրան և Աժդահակ», «Արտաշես և Արտավազդ»:
2. Մեր երկիրը Հայկի անունով կոչվել է Հայք, իսկ ժողովուրդը՝ հայ:
3. Հայկը վայելչակազմ էր, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով և շատ քաջ էր:
4. Բելը Բաբելոնի տերն էր և ուզում էր, որ հայոց նահապետ Հայկը հնազանդվի իրեն:
5. «Հայկ և Բել» առասպելը ձևավորվել է Ք.ա 9-6-րդ դարերում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Թվարկել վիպերգերի վերնագրերը:
2. Բնութագրել Հայկին մի քանի բառով:
3. Հիշել, որ մեր անվանադիրը Հայկն է:
4. Մտաբերել Բելին և հիշել նրա առաջարկը Հայկին:
5. Նշել «Հայկ և Բել» առասպելը երբ է ձևավորվել:

**Դաս 12. Արա Գեղեցիկ և Շամիրամ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞վ էր Արա Գեղեցիկը:
2. Ո՞վ էր Արայի հայրը և ո՞վ` կինը:
3. Ո՞վ էր սիրահարվել Արային և ի՞նչ էր ուզում:
4. Ո՞վ էր Շամիրամը և ի՞նչ էր պահանջում Արայից:
5. Արա Գեղեցիկի ո՞ր հատկանիշն է գովերգել ժողովուրդը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Արան Հայաստանի խնամակալ տերն էր:
2. Արայի հայրը Հայաստանի տեր Արամն էր, իսկ կինը` Նուարդը:
3. Արային սիրահարվել էր Շամիրամը և ուզում էր, որ Արան գնա Ասորեստան:
4. Շամիրամը Ասորեստանի թագուհին էր, ցանկանում էր, որ Արան ամուսնանա իր հետ:
5. Ժողովուրդը Արայի մեջ գովերգել է նրա քաջությունը, բարձր բարոյականությունը, նվիրվածությունը իր ընտանիքին, ժողովրդին ու հայրենիքին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Հիշել` Արան Հայաստանի խնամակալ տերն էր:
2. Ներկայացնել` Արայի հայրը Հայաստանի տեր Արամն էր, իսկ կինը` Նուարդը:
3. Պատմել` Արային սիրահարվել էր Շամիրամը և ուզում էր, որ Արան գնա Ասորեստան:
4. Ներկայացնել` Շամիրամը Ասորեստանի թագուհին էր, ցանկանում էր, որ Արան ամուսնանա իր հետ:
5. Պատմել` ժողովուրդը Արայի մեջ գովերգել է նրա քաջությունը, բարձր բարոյականությունը, նվիրվածությունը իր ընտանիքին, ժողովրդին ու հայրենիքին:

**Դաս 13. Տիգրան և Աժդահակ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞վ էր Տիգրան Առաջին թագավորը:
2. Ո՞վ էր Աժդահակը և ո՞ր երկրի տերն էր:
3. Ինչ՞ նպատակներ ուներ Աժդահակը և դրանց հասնելու համար ու՞մ հետ է ամուսնանում:
4. Ո՞վ էր Տիգրանուհին և ու՞մ կինն է դառնում:
5. Տիգրանը Տիգրանուհուն փրկելուց հետո ի՞նչ դատաստան է տեսնում Աժդահակի հետ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Տիգրանը հայոց երկրի թագավորն էր:
2. Աժդահակը Մարաց երկրի տերն էր:
3. Աժդահակը ամուսնանում է Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհու հետ՝ կամենալով հաստատուն բարեկամություն պահպանել Տիգրանի հետ կամ այդ ձևով դավաճանությամբ սպանել նրան:
4. Տիգրանուհին Տիգրան թագավորի  քույրն էր և ամուսնանում է Աժդահակի հետ:
5.  Տիգրանը Տիգրանուհուն փրկելուց հետո սպանում է Աժդահակին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել՝ Տիգրանը հայոց երկրի թագավորն էր:
2. Նշել՝ Աժդահակը Մարաց երկրի տերն էր:
3. Ներկայացնել՝ Աժդահակը ամուսնանում է Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհու հետ՝ կամենալով հաստատուն բարեկամություն պահպանել Տիգրանի հետ կամ այդ ձևով դավաճանությամբ սպանել նրան:
4. Պատմել՝ Տիգրանուհին Տիգրան թագավորի  քույրն էր և ամուսնանում է Աժդահակի հետ:
5.  Ներկայացնել՝ Տիգրանը Տիգրանուհուն փրկելուց հետո սպանում է Աժդահակին:

**Դաս 14.  Արտաշես և Արտավազդ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞վ էր Արտաշես թագավորը:
2. Ո՞վ էր Սաթենիկը:
3. Ո՞վ էր Արտավազդը:
4. Ինչու՞ է անիծում Արտաշեսը Արտավազդին:
5. Ինչպե՞ս է ավարտվում «Արտաշես և Արտավազդ» առասպելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Արտաշեսը Հայոց երկրի թագավորն էր:
2. Սաթենիկը ալանների թագավորի դուստրն էր:
3. Արտավազդը Սաթենիկի և Արտաշեսի որդին էր:
4. Արտաշեսի թաղման ժամանակ, երբ սովորույթի համաձայն սիրելի արքայի համար նրան հավատարիմ մարդիկ ինքնասպան են լինում, Արտավազդը սրտնեղում է՝ ասելով, որ ինքը այդ ավերակների վրա ինչպես թագավորի, որի պատճառով էլ Արտաշեսը անիծում է որդուն:
5. Արտավազդին չարքերը շղթայակապ պահում են քարանձավում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել՝ Արտաշեսը Հայոց երկրի թագավորն է:
2. Հիշել՝ Սաթենիկը ալանների թագավորի դուստրն էր:
3. Մտաբերել՝ Արտավազդը Սաթենիկի և Արտաշեսի որդին էր:
4. Ներկայացնել, թե ինչու է Արտաշեսը անիծում Արտավազդին:
5. Պատմել՝ Արտավազդին չարքերը շղթայակապ պահում են քարանձավում:

**Դաս 15. «Ողբ» հատված** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ինչու՞ է ողբում Խորենացին:
2. Ու՞մ մահին է ողբում Խորենացին:
3. Ովքե՞ր են Խորենացու ուսուցիչները:
4. Իր «Ողբում» ու՞մ է նկարագրում Խորենացին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Խորենացին ողբում է , որովհետև չկային թագավորը, քահանան, խորհրդականը, ուսուցանողը/ ուսուցիչները/:
2. Խորենացին ողբում է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահը:
3. Խորենացու ուսուցիչներն էին Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը:
4. Իր «Ողբում» Խորենացին նկարագրում է ուսուցիչներին, աշակերտներին, զինվորականներին, իշխաններին, դատավորներին, հոգևորականներին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ներկայացնել՝ Խորենացին ողբում է , որովհետև չկային թագավորը, քահանան, խորհրդականը, ուսուցանողը/ ուսուցիչները/:
2. Նշել՝ Խորենացին ողբում է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահը:
3. Մտաբերել՝ Խորենացու ուսուցիչներին՝ Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին:
4. Թվարկել՝ իր «Ողբում» Խորենացին նկարագրում է ուսուցիչներին, աշակերտներին, զինվորականներին, իշխաններին, դատավորներին, հոգևորականներին:

**Դաս 16. Ընդհանուր ակնարկ դյուցազներգության մասին** **[Թեմատիկ պլանավորում]**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ի՞նչ է դյուցազներգությունը/ էպոսը/:
2. Ո՞րն է հայ ժողովրդական դյուցազներգությունը:
3. Ե՞րբ է ստեղծվել «Սասնա ծռերը»:
4. Ու՞մ կողմից է ստեղծվել «Սասնա ծռերը»:
5. Քանի՞ ճյուղ ունի «Սասնա ծռեր» էպոսը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Դյուցազներգությունը բանահյուսական երկ է:
2. Հայ ժողովրդական դյուցազներգությունը «Սասնա ծռերն» է:
3. «Սասնա ծռերը» ստեղծվել է ութից տասներորդ դարերում:
4. «Սասնա ծռերն» ունի ժողովրդական ծագում:
5. «Սասնա ծռեր» էպոսն ունի չորս ճյուղ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ներկայացնել՝ դյուցազներգությունը բանահյուսական երկ է:
2. Նշել՝ հայ ժողովրդական դյուցազներգությունը «Սասնա ծռերն» է:
3. Սահմանել՝ «Սասնա ծռերը» ստեղծվել է ութից տասներորդ դարերում:
4. Մտաբերել , որ «Սասնա ծռերն» ունի ժողովրդական ծագում:
5. Հիշել՝ «Սասնա ծռեր» էպոսն ունի չորս ճյուղ:

**Դաս 17. Առաջին ճյուղ, «Սանասար և Բաղդասար»** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ովքե՞ր էին Սանասարն ու Բաղդասարը:
2. Ինչու՞ Սանասարն ու Բաղդասարը հեռացան Բաղդադի Խալիֆի մոտից:
3. Ու՞մ համար են Սանասարն ու Բաղդասարը սկզբում կառուցում իրենց բնակավայրի տները:
4. Քանի՞ օրում է կառուցվում Սասունը:
5. Որտեղի՞ց է Սանասարը ձեռք բերում Քուռկիկ Ջալալին, Խաչ Պատերազմին, Թուր Կեծակին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Սանասարն ու Բաղդասարը Ծովինարի որդիներն էին:
2. Բաղդադի Խալիֆի զայրույթից զգուշանալով՝ Սանասարն ու Բաղդասարը հեռացան:
3. Սանասարն ու Բաղդասարը սկզբում աղքատ մարդկանց համար են կառուցում տները:
4. Սասունը կառուցում են քառասուն օրում:
5. Սանասարը Քուռկիկ Ջալալին, Խաչ Պատերազմին, Թուր Կեծակին ձեռք է բերում ջրի տակից:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել՝ Սանասարն ու Բաղդասարը Ծովինարի որդիներն են:
2. Բացատրել , որ Սանասարն ու Բաղդասարը հեռացան՝ Խալիֆի զայրույթից զգուշանալով:
3. Ներկայացնել, որ Սանասարն ու Բաղդասարը սկզբում աղքատ մարդկանց համար են կառուցում տները:
4. Մտաբերել՝ Սասունը կառուցում են քառասուն օրում:
5. Պատմել՝ Սանասարը Քուռկիկ Ջալալին, Խաչ Պատերազմին, Թուր Կեծակին ձեռք է բերում ջրի տակից:

**Դաս 18. Երրորդ ճյուղ, «Սասունցի Դավիթ». Դավիթի և Մելիքի մենամարտը**

[Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞վ է երրորդ ճյուղի գլխավոր հերոսը:
2. Ինչպե՞ս են ստուգում Դավիթի միամտությունը:
3. Ի՞նչ երազ է տեսնում Ձենով Հովանը:
4. Որտե՞ղ էր ընկել Դավիթը Մսրա Մելիքի դավադրությամբ:
5. Ու՞մ է բաշխում Դավիթն իր առաջին և երկրորդ զարկերը:
6. Երրորդ զարկից հետո ի՞նչ է կատարվում Մելիքի հետ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Երրորդ ճյուղի գլխավոր հերոսին:
2. Դավթի միամտությունը ստուգում են ոսկով և կրակով:
3. Ձենով Հովանը երազում տեսնում է, որ Մսրա աստղը պայծառ էր, իսկ Սասնա աստղը խավարել էր:
4. Դավիթը Մսրա Մելիքի դավադրությամբ ընկել էր խորը հոր / փոս:
5. Իր առաջին և երկրորդ զարկերը Դավիթը բաշխում է Մելիքի մորը և քրոջը:
6. Մելիքը երրորդ զարկից հետո երկու կես է լինում և մահանում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել երրորդ ճյուղի գլխավոր հերոսին:
2. Մտաբերել՝ Դավթի միամտությունը ստուգում են ոսկով և կրակով:
3. Պատմել՝ Ձենով Հովանը երազում տեսնում է, որ Մսրա աստղը պայծառ էր, իսկ Սասնա աստղը խավարել էր:
4. Ներկայացնել՝ Դավիթը Մսրա Մելիքի դավադրությամբ ընկել էր խորը հոր/ փոս:
5. Հիշել՝ իր առաջին և երկրորդ զարկերը Դավիթը բաշխում է Մելիքի մորը և քրոջը:
6. Պատմել՝ Մելիքը երրորդ զարկից հետո երկու կես է լինում և մահանում:

**Դաս 19.    Դավիթի մահը** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞ւմ հետ էր նշանվել Դավիթը:
2. Ում հետ էր ամուսնացել Դավիթը:
3. Ո՞վ էր Դավիթի տղան և ի՞նչն է պատճառ դառնում նրանց վեճին ու կռվին:
4. Ո՞վ սպանեց Դավիթին և ինչու՞:
5. Որտե՞ղ թաղեցին Դավիթին և Խանդութին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Դավիթը նշանվել էր Չմշկիկ Սուլթանի հետ:
2. Դավիթը ամուսնացել էր Խանդութ խաթունի հետ:
3. Դավիթի տղան Փոքր Միհերն էր և նրանք միմյանց չճանաչելով կռվեցին:
4. Դավիթին սպանեց իրենից սերված աղջիկը:
5. Դավիթին և Խանդութին թաղեցին Ծովասարում՝ Մարութա վանքում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել՝ Դավիթը նշանվել էր Չմշկիկ Սուլթանի հետ:
2. Վերհիշել՝ Դավիթը ամուսնացել էր Խանդութ խաթունի հետ:
3. Պատմել՝ Դավիթի տղան Փոքր Միհերն էր և նրանք միմյանց չճանաչելով կռվեցին:
4. Նշել՝ Դավիթին սպանեց իրենից սերված աղջիկը:
5. Ներկայացնել՝  Դավիթին և Խանդութին թաղեցին Ծովասարում՝ Մարութա վանքում:

**Դաս 20.  Չորրորդ ճյուղ, Մհերի ամուսնությունը և վերջը** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞վ էր Փոքր Մհերը:
2. Ու՞մ հետ ամուսնացավ Փոքր Մհերը:
3. Ինչու՞ Փոքր Մհերը անմահ և անժառանգ մնաց:
4. Որտե՞ղ է փակվում Փոքր Մհերը:
5. Ե՞րբ է Փոքր Մհերը դուրս գալու Վանա քարի միջից:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Փոքր Մհերը Դավիթի որդին էր:
2. Փոքր Մհերը ամուսնանում է գեղեցկուհի Գոհարի հետ:
3. Դավիթը, չճանաչելով որդուն՝ Փոքր Մհերին, անիծում է նրան՝ ասելով անմահ մնաս և անժառանգ:
